Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-761-15.01.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «լուսաթափանցելիության» բառից հետո լրացնել «՝ օրենսդրությամբ սահմանված» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանիննապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:»:

Հոդված 2. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասում «0.5» թիվը փոխարինել «0.25» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 5-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ.

«5) որոշման հասցեատերը www.roadpolice.am ինտերնետային կայքով դիմել է իր նկատմամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի պահանջներին համապատասխան հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերն իր նշած էլեկտրոնային փոստային հասցեին ուղարկելու պահանջով եւ վարչական մարմնի կողմից կայացված որոշումն ուղարկվել է որոշման հասցեատիրոջ կողմից նշված էլեկտրոնային փոստային հասցեին: Սույն կետով նախատեսված դեպքում որոշման հասցեատիրոջ էլեկտրոնային փոստային հասցեին որոշումն ուղարկելը հավաստվում է վարչական մարմնի կողմից՝ վարչական մարմնի էլեկտրոնային փոստի համակարգը կառավարողի (սպասարկողի) կողմից ինքնաշխատ եղանակով գեներացված փաստաթղթով: Սույն կետով նախատեսված դեպքում նշանակվում է տուգանքի գումարից 20 տոկոսի չափով պակաս տուգանք:»:

Հոդված 4. Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ 123.4-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը, կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո:»:

Հոդված 5. Օրենսգրքի 299-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր մասով.

«Սույն օրենսգրքի 123-րդ, 123^1-ին, 123^3-րդ, 123.4-րդ (բացառությամբ 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124^6-րդ, 125-րդ, 125.1-ին, 126-րդ, 128-րդ հոդվածներով, 129.2-րդ հոդվածի 1-ին մասով, 131-րդ, 132-րդ, 134-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով նախատեսված տուգանքի ձեւով վարչական տույժ նշանակելու մասին որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվելու (ծանուցվելու) օրվան հաջորդող օրվանից 15 օրվա ընթացքում նշանակված տուգանքի առնվազն 70 տոկոսը վճարելու դեպքում տուգանքի վճարման պարտականությունը համարվում է ամբողջությամբ կատարված՝ բացառությամբ վարչական տույժ նշանակելու որոշումը գանգատարկվելու (բողոքարկվելու) դեպքում:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մայիսի 1-ից, և 4-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո կատարված իրավախախտումներից բխող իրավահարաբերությունների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ուժի մեջ մտնելու ժամկետները:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների համար վարչական տույժ նշանակելու մասին մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կայացված և դեռևս չկատարված, այդ թվում՝ հարկադիր կատարման փուլում գտնվող այն որոշումները, որոնցով նշանակված տուգանքի առնվազն 50 տոկոսը օրենքն ուժի մեջ մտնելու պահին վճարված (գանձված) է կամ վճարվել է սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 3 ամսվա ընթացքում, համարվում են կատարված:

4. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների համար վարչական տույժ նշանակելու մասին որոշումների հիման վրա հարուցված կատարողական վարույթներով կատարողական գործողություններն օրենքի ուժով հետաձգվում են սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 3 ամիս ժամկետով:

5. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների հիման վրա կայացված անբողոքարկելի վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եռամսյա ժամկետը համարվում է կասեցված սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 3 ամիս ժամկետով:

6. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների համար նշանակված տուգանքի վճարման պարտականությունը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով եւ չափով կատարելու դեպքում այդ որոշումների հիման վրա հարուցված կատարողական վարույթներն օրենքով սահմանված կարգով ենթակա են կարճման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 67-րդ հոդվածով նախատեսված՝ կատարողական գործողությունների կատարման ծախսերի չափը հաշվարկելիս որպես բռնագանձման ենթակա գումար հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով եւ չափով վճարված գումարը (նշանակված տուգանքի 50 տոկոսը):

~~*Առաջին*~~ *Երկրորդ ընթերցում*

Կ-761-15.01.2024-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ~~ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «լուսաթափանցելիության» բառից հետո լրացնել «՝ օրենսդրությամբ սահմանված» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանիննապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր: ~~124-րդ հոդվածի 21-րդ, 22-րդ եւ 23-րդ մասերում «0,5» թիվը փոխարինել «1» թվով, 25-րդ մասում «հնգապատիկի չափով», իսկ 27-րդ մասում «քսանապատիկի չափով» բառերից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 0,5 միավոր:» բառերը:~~

Հոդված 2. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասում «0.5» թիվը փոխարինել «0.25» թվով:

~~***Հոդված 2.*** Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.~~

~~«1) սույն օրենսգրքի 97[2], 97[3], 147 հոդվածներով, 183[1], 189[2]–189[6], 189.9-189.10, 189.25, 189.26-189.28 հոդվածներով, 206[5], 206[10], 206[11], 206[12], 206[13], 206.14 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.»:~~

~~***Հոդված 3.*** Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.~~

~~«1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 41.5-րդ, 41.7-41.8-րդ, 43.1-ին հոդվածի 3-րդ, 4-րդ, 7-րդ (Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին), 10-12-րդ մասերով, 44.1-ին, 442-րդ, 47.14-րդ, 52.1-ին, 53-րդ, 53.2-53.6-րդ, 95-րդ, 1101-ին, 110.2-րդ, 111-րդ, 123-123.4-րդ (բացառությամբ 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների),~~

~~123.5-րդ (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ եւ տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 134-րդ, 135.1-ին, 135.2-րդ, 139-րդ, 140-րդ, 153-րդ, 160-րդ, 169.23-րդ, 169.30-րդ, 172.2-րդ, 172.3-րդ, 173-րդ, 173.2-րդ, 175-րդ, 177-րդ, 178-րդ, 178.1-ին, 178.2-րդ, 179.1-ին, 180-րդ (բացառությամբ հինգերորդ եւ վեցերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 1801-րդ, 181-րդ, 182-րդ 182.3-րդ հոդվածներով, 182.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-8-րդ, 9-րդ (բացառությամբ պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի եւ սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) կողմից մեկուսացման կանոնների խախտման վերաբերյալ իրավախախտումների) եւ 10-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-րդ մասերով, 183-րդ, 183.2-րդ, 184-րդ, 186-րդ (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում), 189.8-րդ, 190-193-րդ, 199-րդ, 200-րդ, 204.2-րդ եւ 206.16 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Ընդ որում, սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 10-րդ եւ 11-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է 43.1-ին հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 7-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների մասով:»:~~

~~*Հոդված 4.* Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:~~

~~*Հոդված 5.* Օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «,180[1] եւ 182» բառերը:~~

Հոդված ~~3~~6. Օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 5-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ.

«5) որոշման հասցեատերը www.roadpolice.am ինտերնետային կայքով դիմել է իր նկատմամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի պահանջներին համապատասխան հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերն իր նշած էլեկտրոնային փոստային հասցեին ուղարկելու պահանջով եւ վարչական մարմնի կողմից կայացված որոշումն ուղարկվել է որոշման հասցեատիրոջ կողմից նշված էլեկտրոնային փոստային հասցեին: Սույն կետով նախատեսված դեպքում որոշման հասցեատիրոջ էլեկտրոնային փոստային հասցեին որոշումն ուղարկելը հավաստվում է վարչական մարմնի կողմից՝ վարչական մարմնի էլեկտրոնային փոստի համակարգը կառավարողի (սպասարկողի) կողմից ինքնաշխատ եղանակով գեներացված փաստաթղթով: Սույն կետով նախատեսված դեպքում նշանակվում է տուգանքի գումարից 20 տոկոսի չափով պակաս տուգանք:»:

Հոդված ~~4~~7. Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ 123.4-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը, կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո:»:

Հոդված 58. Օրենսգրքի 299-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր մասով.

«Սույն օրենսգրքի 123-րդ, 123[1]-ին, 123[3]-րդ, 123.4-րդ (բացառությամբ 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124[6]-րդ, 125-րդ, 125.1-ին, 126-րդ, 128-րդ հոդվածներով, 129.2-րդ հոդվածի 1-ին մասով, 131-րդ, 132-րդ, 134-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով~~123.1-ին հոդվածով (բացառությամբ 2-րդ մասի), 123.3-րդ, 123.4-րդ, 124-րդ (բացառությամբ 4-րդ, 14-րդ, 18-րդ, 24-25-րդ, 27-րդ մասերի), 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ հոդվածներով, 124.4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 124.6-րդ հոդվածի 1-ին մասով, 125-րդ հոդվածով, 128-րդ հոդվածի 3-րդ մասով, 129.2-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, 131-րդ հոդվածով եւ 135.2-րդ հոդվածի 1-ին մասով~~ նախատեսված տուգանքի ձեւով վարչական տույժ նշանակելու մասին որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվելու (ծանուցվելու) օրվան հաջորդող օրվանից 15 օրվա ընթացքում նշանակված տուգանքի առնվազն 70 տոկոսը վճարելու դեպքում տուգանքի վճարման պարտականությունը համարվում է ամբողջությամբ կատարված՝ բացառությամբ վարչական տույժ նշանակելու որոշումը գանգատարկվելու (բողոքարկվելու) դեպքում:»:

Հոդված 69.~~ Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մայիսի 1-ից, և 4-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից: ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին 8-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:~~

2. Սույն օրենքի ~~2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 7-րդ հոդվածների~~ գործողությունը տարածվում է սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո կատարված իրավախախտումներից բխող իրավահարաբերությունների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ուժի մեջ մտնելու ժամկետները:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների համար վարչական տույժ նշանակելու մասին մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կայացված և դեռևս չկատարված, այդ թվում՝ հարկադիր կատարման փուլում գտնվող այն որոշումները, որոնցով նշանակված տուգանքի առնվազն 50 տոկոսը օրենքն ուժի մեջ մտնելու պահին վճարված (գանձված) է կամ վճարվել է սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 3 ամսվա ընթացքում, համարվում են կատարված:~~3. Սույն օրենքի գործողությունը~~

~~տարածվում է նաեւ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների համար վարչական տույժ նշանակելու մասին մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կայացված եւ դեռեւս չկատարված, ինչպես նաեւ վարչական տույժ նշանակելու մասին մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կայացված եւ հարկադիր կատարման փուլում գտնվող այն որոշումների վրա, որոնցով նշանակված տուգանքի առնվազն 50 տոկոսը օրենքն ուժի մեջ մտնելու պահին վճարված (գանձված) է կամ վճարվել է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 3 ամսվա ընթացքում:~~

4. Սույն օրենքի 5~~8~~-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների համար վարչական տույժ նշանակելու մասին որոշումների հիման վրա հարուցված կատարողական վարույթներով կատարողական գործողություններն օրենքի ուժով հետաձգվում են սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 3 ամիս ժամկետով:

5. Սույն օրենքի 5~~8~~-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների հիման վրա կայացված անբողոքարկելի վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եռամսյա ժամկետը համարվում է կասեցված սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 3 ամիս ժամկետով:

6. Սույն օրենքի 5~~8~~-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների համար նշանակված տուգանքի վճարման պարտականությունը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով եւ չափով կատարելու դեպքում այդ որոշումների հիման վրա հարուցված կատարողական վարույթներն օրենքով սահմանված կարգով ենթակա են կարճման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 67-րդ հոդվածով նախատեսված՝ կատարողական գործողությունների կատարման ծախսերի չափը հաշվարկելիս որպես բռնագանձման ենթակա գումար հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով եւ չափով վճարված գումարը (նշանակված տուգանքի 50 տոկոսը):

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ և ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-761-15.01.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն ՀՀ Աժ պատգամավոր Արսեն Թորոսյան	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում «124-րդ հոդվածի 21-րդ, 22-րդ եւ 23-րդ մասերում «0,5» թիվը փոխարինել «1» թվով, 25-րդ մասում «հնգապատիկի չափով», իսկ 27-րդ մասում «քսանապատիկի չափով» բառերից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 0,5 միավոր:» բառերը:» բառերը փոխարինել «123-րդ հոդվածի՝ 1) 4-րդ մասում «լուսաթափանցելիության» բառից հետո լրացնել «՝ օրենսդրությամբ սահմանված» բառերով, 2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 4-րդ մասով	Առաջարկի հիման վրա նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

			նախատեսված արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանիննապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:» բառերով: Այսինքն, որոշ իրավախախտումների համար 0.5-ի փոխարեն 1 տուգանային միավոր նախատեսող, իսկ որոշների համար էլ 0.5 տուգանային միավոր նախատեսող դրույթները հանվել են՝ նպատակ ունենալով որոշակի ժամանակահատվածում ուսումնասիրել օրենքի նախագծով ներդրվող՝ ցածր տուգանքներ կիրառելու նոր համակարգերի ազդեցությունը, այնուհետև, ըստ անհրաժեշտության կատարել անհրաժեշտ միջամտություններ: Բացի այդ, առաջարկվում է հստակեցնել տրանսպորտային միջոցների լուսաթափանցելության չափերի սահմանման իրավական հիմքերը՝ հաշվի առնելով «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի՝ ՀՀ տարածքում անմիջական կիրառության ենթակա լինելու և ՀՀ օրենսդրության մաս հանդիսանալու հանգամանքը: Միաժամանակ, լուսաթափանցելիության սահմանված չափերի խախտումը մեկ տարվա		

			ընթացքում կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ կատարելու համար առաջարկվում է սահմանել ավելի բարձր տուգանք և տուգանային միավորի կիրառում՝ հաշվի առնելով նշված իրավախախտումների բնույթը երթևեկության անվտանգության ապահովման տեսանկյունից:		
2.	ՀՀ կառավարություն ՀՀ ԱԺ պատգամավորներ Վլադիմիր Վարդանյան, Արմեն Խաչատրյան և Վահագն Ալեքսանյան	**Նախագծի նոր 2-րդ հոդված**	Նախագիծը լրացնել նոր՝ 2-րդ հոդվածով, որով գործող օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասում «0.5» թիվը փոխարինել «0.25» թվով: Ըստ այդմ, նախագիծը լրացվել է նոր 2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «***Հոդված 2.*** Օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասում «0.5» թիվը փոխարինել «0.25» թվով:»	ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ 2024 թ. փետրվարի 19-ին կայացած քննարկման արդյունքներով նախագիծը խմբագրվել է՝ հաշվի առնելով Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տաքսի ծառայություններ մատուցող անձանց հետ ունեցած քննարկումները:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 8 **(ներկայիս 5-րդ)**	Նախագծի 8-րդ (ներկայիս 5-րդ) հոդվածով գործող օրենսգրքի 299-րդ	Առաջարկի հիման վրա նախագիծը	Ընդունվել է:

			հոդվածում լրացվող նոր մասով 30%-ով պակաս գումար վճարելու հնարավորությունը նախատեսել ճանապարհային երթևեկության բնագավառի բոլոր իրավախախտումների նկատմամբ: Ըստ այդմ նախագծի 8-րդ հոդվածով (ներկայիս 5-րդ հոդված) նախատեսվող Օրենսգրքի 299-րդ հոդվածում լրացվող նոր մասն առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ ***«Հոդված 5.*** Օրենսգրքի 299-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր մասով. «Սույն օրենսգրքի 123-րդ, 123[1]-ին, 123[3]-րդ, 123.4-րդ (բացառությամբ 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124[6]-րդ, 125-րդ, 125.1-ին, 126-րդ, 128-րդ հոդվածներով, 129.2-րդ հոդվածի 1-ին մասով, 131-րդ, 132-րդ, 134-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով նախատեսված տուգանքի ձեւով վարչական տույժ նշանակելու մասին որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով	խմբագրվել է:	

			հանձնվելու (ծանուցվելու) օրվան հաջորդող օրվանից 15 օրվա ընթացքում նշանակված տուգանքի առնվազն 70 տոկոսը վճարելու դեպքում տուգանքի վճարման պարտականությունը համարվում է ամբողջությամբ կատարված՝ բացառությամբ վարչական տույժ նշանակելու որոշումը գանգատարկվելու (բողոքարկվելու) դեպքում:»:		
4.	ՀՀ կառավարություն	Հոդված 9 **(ներկայիս 6-րդ)**	Նախագծի 9-րդ (ներկայիս 6-րդ) հոդվածը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին և շտկել առկա խմբագրական բացթողումները: Ըստ այդմ նախագծի 9-րդ հոդվածով (ներկայիս 6-րդ հոդված) առաջարկում ենք վերանայել անցումային դրույթները:	Առաջարկի հիման վրա նախագիծը խմբագրվել է: Մասնավորապես, օրենքն ուժի մեջ մտնելու համար սահմանվել է պաշտոնական հրապարակումից հետո տասնօրյա ժամկետ, բացառությամբ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների: Օրենքի 3-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսվել է համապատասխան կայքը նախագծի պահանջներին համապատասխան եցնելու	Ընդունվել է:

				ամենասեղմ ժամկետներին համապատասխան: Օրենքի 4-րդ հոդվածն ուժի մեջ մտնելը համապատասխան եցվել է «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետին՝ հաշվի առնելով դրանց փոխկապակցվածությունը:	
5.	**«Հայաստան» խմբակցություն**	Հոդված 2	1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածում՝ «183[1]» թվից առաջ լրացնել «180[1], 182» թվերը: Վարչական իրավախախտումների	Առաջարկն ընդունվել է: ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ 2024 թ. փետրվարի 19-ին	Ընդունվել է:

			վերաբերյալ օրենսգրքի 180[1]-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում հավաքներ անցկացնելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելու համար, իսկ հոդվածի մանրամասն վերլուծության արդյունքում գալիս ենք այն տրամաբանական եզրակացության, որ տվյալ իրավախախտումը ուղղակիորեն փոխկապակցված է համայնքի ղեկավարի, նրա լիազորությունների և պաշտոնական պարտականությունների կատարման հետ, հավաքի վերաբերյալ իրազեկման լսումները անցկացնում է լիազոր մարմինը՝ համայնքապետարանը, բացի այդ, որպես «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված համապատասխան վարչարարություն իրականացնելու սուբյեկտ հենց հանդիսանում է համայնքապետարանը, իսկ ոստիկանության պարտականությունները բացառապես օժանդակող են՝ սահմանված «Հավաքների ազատության մասին» օրենքի 32-րդ հոդվածով, հետևաբար ոստիկանությունը, հանդիսանալով հավաքների ազատության իրացման օժանդակող պետական մարմին, չի կարող հանդիսանալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքի 180[1]-րդ հոդվածով նկարագրված արարքը քննող և միջամտող վարչական ակտ կայացնելու իրավասությամբ օժտված սուբյեկտ:	կայացած քննարկման արդյունքներով նախագիծը խմբագրվել է: Միաժամանակ, պետք է նշել, որ նշված դրույթները նախագծում ներառելու նպատակը հի վարչական դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումն էր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տվյալ գործերով վարչական դատարանը, ըստ էության, իրականացնում է ոչ թե արդարադատություն, այլ՝ վարչարարություն: Այնուամենայնիվ, հատվածական լուծումներից խուսափելու համար	

			Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքի 182-րդ հոդվածի մասով առաջարկների իմաստը կայանում է նրանում, որ ոստիկանությունը, հենց «Հավաքների ազատության մասին» օրենքի 32-րդ հոդվածով պայմանավորված հանդիսանալով օժանդակող սուբյեկտ, ինչպես նաև ունենալով հնարավորություն դադարեցնել հավաքը, չի կարող ինքնաբերաբար նաև որոշում կայացնել անձի' ոստիկանության օրինական պահանջը չկատարելու վերաբերյալ, քանի որ այդ կերպ անհամաչափորեն սահմանափակվում է կամ կարող է սահմանափակվել հավաքների ազատության Սահմանադրական իրավունքը: Հավաքների ազատության իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքի սահմանափակման սահմանները ամրագրված են նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, որի 11. 5. հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք' ներառյալ իր շահերի պաշտպանության համարարհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը»: Կոնվենցիայի իմաստով հավաքների	հանձնաժողովի կողմից առաջարկվել է խնդրին անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի շրջանակներում՝ քննարկելով համապատասխան գործերի քննությունը վարչական դատարանի փոխարեն բոլոր համապատասխան վարչական մարմիններին (ոչ թե միայն ոստիկանությանը) վերապահելու հարցը՝ վարչական մարմինների միջև խտրական մոտեցումը բացառելու և հիմնախնդրի համալիր լուծում ապահովելու	

			ազատության իրավունքը ունի ակտիվ և պասիվ դրսևորումներ. Ակտիվ դրսևորմամբ այն արտահայտվում է հավաքների մասնակցելով, պասիվ դրսևորմամբ՝ դրանք կազմակերպելով, հետևաբար հավաքների ազատության սահմանափակումների իրավաչափությունը, դրա օրինական, հիմնավոր և համաչափ լինելը կիրառելի է թե՞ դրանց կազմակերպման, թե՝ անկացման նկատմամբ: Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը Վենետիկի հանձնաժողովը, իր 1/07/2014թ խորհրդատվական կարծիքի մեջ միանշանակ ամրագրել է, որ ներպետական օրենսդրությամբ հստակ պետք է նախատեսվեն հավաքների ազատության իրավունքի ղեկավար սկզբունքները, որոնցից հատկապես առանձնացվում են 1. հավաքների իրականացման թույլատրելիության կանխավարկածը, 2. խաղաղ հավաքները պաշտպանելու պետության պարտականությունը, 3. համաչափությունը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Աշուղյանն ընդդեմ Հայաստանի գործի 17.07.2008թ վճռով արձանագրել է, որ «հավաքների ազատության իրավունքը	նպատակով: Արդյունքում, նախագծից հանվել է առաջարկին վերաբերող հոդվածը:	

			ժողովրդավարական հասարակությունում հիմնարար իրավունք է, այդպիսի հասարակության հիմնաքարերից մեկը, իսկ իշխանությունները որոշակի հանդուրժողականություն պետք է ցուցաբերեն խաղաղ հավաքների նկատմամբ, և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվեցիայով երաշխավորված հավաքների ազատությունը չպետք է զրկվի իր ողջ էությունից»: Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 11.07.2007 թվականի վճռով ՄԻԵԴը արձանագրել է, որ պետության կողմից միջամտությունը հավաքների ազատության իրավունքին կհամարվի Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում, եթե այն չլինի' «նախատեսված օրենքով», չհետապնդի 2-րդ պարբերությամբ նախատեսված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակ և չլինի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակների իրականացման համար: Դատարանը նաև նշել է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածում առկա **«օրենքով նախատեսված» արտահայտությունը ոչ միայն պահանջում է, որ վիճարկվող միջոցառումը ունենա որոշակի հիմնավորվածություն**		

			ներպետական օրենսդրության մեջ, այլև այն վերաբերի քննարկվող օրենքի որակին: Օրենքը պետք է մատչելի լինի բոլոր նրանց համար, ում այն վերաբերում է, ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի հնարավորություն տա նրանց, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդի առկայության պայմաններում, ողջամտության սահմաններում կանխատեսել, թե տվյալ պայմաններում ինչ հետևանքներ կարող է ունենալ կոնկրետ գործողության կատարումը: **ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի զեկույցում նշվում է, որ պետությունը պարտավոր է** ապահովել հավաքների ազատության իրավունքի իրացումը բոլորի կողմից կանանց, երիտասարդության, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, օտարերկրացիների և այլ անձանց կողմից, այլ կերպ ասած երաշխավորել այս իրավունքի իրացումը առանձ որևէ խտրականության, ինչպես նաև **երաշխավորել, որ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման հիմքերը նախատեսված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում:** Հետևաբար, նմանատիպ օրենսդրական կարգավորման պարագայում ոստիկանությունը, ի թիվս հավաքների		

			անկացմանն առնչվող այլ լիազորությունների, կունենա նաև հայեցողական լիազորություն՝ «օրինական պահանջ» հնչեցնելու միջոցով, ի հակասումն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի՝ոչ օրենքով, այլ ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող բանավոր վարչական ակտով փաստացի դադարեցնել հավաքը՝ դրա ապահովման միջոց էլ ծառայեցնելով 50000 դրամ տուգանք նշանակելու մասին որոշումը կամ այդպիսի որոշման ընդունման վտանգը, որը սույն փաթեթով հանդերձ քաղաքացու համար առաջացնելու նաև լրացուցիչ բեռ՝ 7400 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման պարտականություն՝ այդպիսի միջամտող վարչական ակտը բողոքարկելու համար: էլ ավելի բարձր պետական տուրքի սահման է դրված սույն նախագծով առաջարկվող կարգավորումների ընդունման պարագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180[1]-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության կիրառման դեպքում կայացված վարչական ակտերի բողոքարկման պարագայում: Մյուս կողմից, հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180[1]-րդ հոդվածի պարագայում քննության առարկա է դառնում նաև հնչեցված պահանջի		

			օրինականությունը, որը հենց ոստիկանության կողմից քննվելու դեպքում չի կարող ապահովել օբյեկտիվության բավարար շեմը: Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180[1]-րդ հոդվածով սահմանված արարք կատարելու հիմքով ոստիկանության կողմից հայց ներկայացվելու դեպքում անձը, իհարկե, անկախ նման հայցի գոյությունից, կարող է բարձրացնել ոստիկանության գործողությունների իրավաչափությունը վիճարկելու հայց, այդ թվում՝ հակընդդեմ հայցով և մեկ վարույթով փաստորեն ՀՀ Վարչական դատարանը քննում է երկու գործ, մինչդեռ նախագծի ընդունման պարագայում ավելանալու է ՀՀ Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը ևս, քանի որ վարույթները կարող են կրկնապատկվել. Մի կողմից առանձին վարույթով քննվի Ոստիկանության կողմից քաղաքացու նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180[1]-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու հիմքով կայացված վարչական ակտը վիճակելու գործ, մյուս կողմից՝ ոստիկանության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ գործ:		
		Հոդված 3	2. Նախագծի 3-րդ հոդվածից առաջարկվում է հանել «180[1]» և «182»	Առաջարկն ընդունվել է: ՀՀ	

			թվերը:	Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ 2024 թ. փետրվարի 19-ին կայացած քննարկման արդյունքներով նախագիծը խմբագրվել է: Արդյունքում, նախագծից հանվել է առաջարկին վերաբերող հոդվածը:	
		Հոդված 4	3. Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ մասից հանել «41.5, 47.14, 172.3» և «206.16» թվերը:	Առաջարկն ընդունվել է: ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ 2024 թ. փետրվարի 19-ին կայացած քննարկման արդյունքներով նախագիծը խմբագրվել է: Արդյունքում,	

				նախագծից հանվել է առաջարկին վերաբերող հոդվածը:	
		Հոդված 5	4. Նախագծից հանել նախագծի 5-րդ հոդվածը:	Առաջարկն ընդունվել է: ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ 2024 թ. փետրվարի 19-ին կայացած քննարկման արդյունքներով նախագիծը խմբագրվել է: Արդյունքում, նախագծից հանվել է առաջարկին վերաբերող հոդվածը:	
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1 Հոդված 3 Հոդված 4	Նախագծի 1-ին, 3-րդ և 4-րդ հոդվածները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին և շտկել առկա խմբագրական բացթողումները: Ըստ այդմ առաջարկում ենք հանել նախագծի՝	Առաջարկի հիման վրա նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

			1) 1-ին և 3-րդ հոդվածների «և դրա մարմինների» բառերը, 2) 4-րդ հոդվածի վերնագիրը:		
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1	**«Հայաստան» խմբակցություն**		«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի (Կ-761[3]-15.01.2024-ՊԻ-011/1) նախագիծն առաջարկվում է հանել նախագծերի փաթեթից, քանի որ. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք«: Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական	Առաջարկն ընդունվել է: ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ 2024 թ. փետրվարի 19-ին կայացած քննարկման արդյունքներով նախագիծը հանվել է նախագծերի փաթեթից այն տրամաբանությամբ, որ պետական տուրքի չափերը հետագայում կարող են փոփոխվել՝ հարակից օրենքների փաթեթի ընդունումից հետո ձևավորվող համապատասխան	Ընդունվել է:

			մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:» «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, «Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի», «Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի» և բազմաթիվ այլ գործերով կայացված որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ամրագրել է, որ.Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված դատարան դիմելու իրավունքը բացարձակ բնույթ չունի, այն կարող է սահմանափակվել: Այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները, այդ թվում պետական տուրքերը չպետք է այն աստիճանի սահմանափակեն անձի' դատարանի մատչելիության իրավունքը, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը, Դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումները անհամատեղելի կլինեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե իրավաչափ նպատակ չհետապնդեն և չլինի ողջամիտ, հավասարակշռված կապ' գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի	պրակտիկայի ուսումնասիրություն ից հետո:	

			միջև: Այս հարցի կապակցությամբ նույն դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ թիվ ԿԴ/0338/02/08 քաղաքացիական գործով 10.04.2009թ.կայացված որոշմամբ: **Դիտարկելով պետական տուրքի վճարման պայմանը որպես դատարանների մատչելիության և արդար դատաքննության իրավունքից օգտվելու նախապայման, անհրաժեշտ է քննարկել պետական տուրքի վճարումը դատարանների մատչելության լույսի ներքո,** ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներում (տե ս, ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289) կարևորելով իրավակարգավորման մի շարք սկզբունքներ արձանագրել է, որ՝ • դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ		

			Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, • ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված' դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, • դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք • չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով, Իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով' դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:		

			Նախագծով փաթեթով ներկայացված ներկայացված նախագծերի դեպքում տարբերակված մոտեցում է ցուցաբերվում ոստիկանության կողմից կայացված վարչական ակտերի բողոքարկման համար, որի պարագայում պետական տուրքի առավել բարձր չափ է նշված, ընդ որում՝ բացակայում է տարբերակման հիմքը: Մյուս կողմից, ոստիկանության, այդ թվում՝ ոստիկանության մարմինների կայացված ակտերը առավել մեծ թիվ են կազմում ՀՀ-ում, հետևաբար այսպիսի տարբերակված մոտեցումը միմիայն հանգեցնելու է անձանց՝ դատարան դիմելու իրավունքից իրացման նվազեցմանը, քանի որ պետական տուրքը և դատարան դիմելու հետ առնչվող փոստային ծախսերի համագումարը անգամ գերազանցելու է բուն միջամտող ակտով սահմանված տուգանքի չափը Կ-761-15.01.2024-ՊԻ-011/0 նախագծի 6-րդ և 8-րդ հոդվածների կիրառման դեպքում, հետևաբար օբյեկտիվ իրականության մեջ անձի համար ավելի շահավետ է լինելու վճարել տուգանքը, որը տեսականորեն կարող է կազմված լինել օրենքի և իրավունքների խախտմամբ, քան թե բողոքարկել այն՝ դրանով իսկ խաթարելով Սահմանադրությամբ հռչակված Հայաստանի իրավական պետություն		

			լինելու անկյունաքարային սկզբունքը: Այն դեպքերում, երբ վիճարկման հայց բերողի նպատակը արդարադատության միջոցով արդարությունը հաստատելն է, որը տվյալ դեպքում դրսևորվում է կոնկրետ չափի տուգանքի վերացմամբ, պետական տուրքի՝ բուն ակտով սահմանված չափից չնչին չափով նվազ լինելը կամ դրան հավասար լինելը և անգամ գերազանցելը խաթարում է արդարադատության բուն էությունը՝ անձի մոտ նվազեցնելով իր իրավունքների պաշտպանությանը դիմելու ցանկությունը: Վերոգրյալը հաշվի առնելով՝ ՆԳՆ Ոստիկանության և դրա մարմինների կողմից կայացված ակտերի բողոքարկման համար պետական տուրքի՝ անհամեմատ ու անհամաչափ ավելի բարձր շեմի սահմանելը համարում ենք ոչ հիմնավոր և արդարադատության էությունը խաթարող ինչի պատճառով առաջարկում ենք հանել այն սույն նախագծերի փաթեթից:		